

հայ հոգևորականութեան հաւատարիմ հպատակութեան զգացմունքները արտայայտող Ձեր Բարձր Սրբազնութեան հեռագրի ամենահպատակօրէն ղեկուցումը լսելով, ամենաողորմածաբար իւր սեպհական ձեռքով բարեհաճեց մակագրել «Մեկեղծ շնորհակալ ենք»:

Այս ԲԵՐՁՐԵԳՈՅՆ որոշումը պատիւ ունիմ ծանուցանել Ձեր Բարձր Սրբազնութեան, որպէս զի յայանէք ուր հարկն է:

Գեներալ Ադիւտանտ՝ ՇԵՐԵՄԵՏԵԻ:

Պաշտօնակատար վերակացուի
գլխաւորանձն՝ ՇԱՏԻՆՈՎ:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր:

Մայր Աթոռի Գէորգեան ձեմարանի տեղեկագրի տպագրութեան մէջ մի քանի սխալներ են սպրդուել, որը վարչութիւնը պարտք է համարում ուղղել:

Պ. Ս. Մանգինեանը հաշուի մէջ նշանակած դասերի հետ կառավարել է այլ և ձեմարանի վարժոցն:

Պ. Ս. Տէր-Գաբրիէլեանի բաց թողած դասերի թիւը 5-ի տեղ նշանակուած է 70 հիւանդութեան պատճառով, 21 անյայտ բացի այդ 5 դաս պարապել է չեկած ուսուցիչների տեղ:

Արժանապատիւ Սահակ և Ղևոնդ վարդապետների ուսուցչական ռոճիկի մէջ մտնում է նաև նորանց վարդապետական ռոճիկը իւրաքանչիւրին 300 ուրբի:

Պ. Լիսիցեանը յիշուած աւարկանների հետ ունեցել է այլ և Ռուսաց պատմութեան դասեր:

Շնորհունակ Տիգրան սարկաւազ և պ. Գ. Տէր-Բարդուղիմէոսեանը դասաւանդութեան հետ կատարել են և վերակացուի պաշտօն:

Բացի այդ ձեմարանի վարչութիւնը հարկ է համարում յայտնել, որ անցեալ տարեշրջանում ձեմարանի առողջապահական պայմանները եղել են շատ բաւարար, եղել է մի մահուան դէպք միայն (տիֆից):